

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԳ. (33րդ) Հատորի Շնորհանդէսը

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԳ. Հատորի շնորհանդէսը տարբեր էր այս տարի նախորդ բոլոր տարիներէն: Ճիշդ է որ, նախորդ հատորներու հանդիսութեանց նման այս տարի եւս ներկայացուցաւ նորընծայ հատորը, այդուհանդերձ, շնորհանդէսը նաեւ պատեհ առիթը դարձաւ մեծարելու Հայր Անդրանիկ Ս. Վրդ. Կոստեանը Հայկազեան Հայագիտական Հանդէսի 23 տարիներու անխնջ պատասխանատու- խմբագիրը: Համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցած հանդիսութեան ներկայ էին, Վեր. Մկրտիչ Գարակեօզեան, Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, պետական երեսփոխան Յակոբ Բագրատունի, Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Տիար Աշոտ Քոչարեան, Հայկազեան Հայագիտական Հանդէսի բարեկամներ, լիբանանահայ մշակոյթի եւ գրականութեան դէմքեր, մտաւորականներ, ուսուցիչներ, խմբագիրներ, եւ ազգային կառոյցներու ներկայացուցիչներ:

Բարիգալուստի իր խօսքին մէջ, Հանդէսի խմբագրակազմի անդամ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան անդրադարձաւ հատորի «Հայագիտութիւնը Եւ Ճշմարտութիւնը» վերնագրեալ խմբագրականին, որ «նպատակ ունի ընթերցողին ու հայագիտական շրջանակներուն ուշադրութիւնը սեւեռել կարգ մը անուրանալի ճշմարտութիւններու վրայ, որոնք աւելիով պիտի բիրտեղացնեն հայագիտական ուսմունքներու եւ ուսումնասիրութիւններու 'միտք բանին', գոյապատճառը, եթէ անշուշտ քիչ մը ամէն տեղ լսող ականջներ ու գործադրող կամքեր գտնուին»: Ապա ան անդրադարձաւ Հայկազեան Համալսարանի ծաւալած հայագիտական գործունէութեան եւ ծանրացաւ հայ տպագրութեան 500ամեակին նուիրուած հինգ հանդիսութիւններուն եւ այդ առթիւ կատարուած հրատարակութիւններուն:

Դոկտ. Իւրնէշլեան նշեց որ Համալսարանի հայագիտական գործունէութեան համապատկերին վրայ «հպարտօրէն կ'ուրուագծուի Հայր Անդրանիկ Կոստեանին կենդանի պատկերը: Հայկազեանի Հայագիտական դիմագիծէն անտրոհելի կը մնայ ան, ...ու կը համարուի Համասարանին հայագիտական առաքելութեան բեղուն անուններէն մին: 1990ին ստանձնելով Հանդէսի խմբագրապետի պատասխանատուութիւնը, Վարդապետը, ի շարս իր հոգեւոր, խմբագրական, դասախօսական եւ հանրային ծառայութիւններուն, այսօր հանրութեան կը ներկայանայ 23 հատոր Հայկազեան Հայագիտական Հանդէսով: Եւ ի շնորհակալութիւն Հայր Կոստեանի մատուցած ու

մատուցելիք երկարամեայ նուիրեալ ծառայութեան, Հայաստանի Հանրապետութեան մայր գրադարանը, Ազգային Գրադարանը զինք կը պատուէ «Յակոբ Մեղապարտ»ի անուան յուշամետալով»: Հայր Կոստանեան բարեմաղթանքներ կատարելէ ետք, Դոկտ. Իրենշէան անդրադարձաւ 33րդ հատորին, նշելով որ ի յաւելումն հատորի ընկալեալ բնոյթի յօդուածներուն, այս հատորով «կը սկսինք հրատարակել յուշագրութիւններու շարք մը, որոնք կ'ամփոփեն Եղեռնէն ետք գրուեալ Հայաստան մնացած հայոց ժառանգորդներուն վկայութիւնները: Այս թիւին մէջ կան այդպիսի չորս վկայութիւններ, որոնց պիտի յաջորդեն եւս ուրիշներ: Նաեւ սոյն թիւով կ'ամրագրուի Արցախցի հայազէտներու մասնակցութիւնը»:

Ապա բեմ բարձրացաւ Հայկազեան Համալսարանի Արուեստից եւ Գիտութեանց Բաժիններու Տեսուչ, Հանդէսի իմբագրակազմի անդամ Դոկտ. Արտա Էքմէճիւն, որ ներկայացուց Հայր Անդրանիկ Օ. Վրդ. Կոստանէն: Ամփոփելով իր խօսքը, Դոկտ. Էքմէճի ըսաւ. «Իր ազգային ջիղով, կորովով ու յարատեւութեամբ յատկանշուող Հայր Անդրանիկ Օ. Վրդ. Կոստանէն, Հայկազեան Համալսարանին միացաւ 1960ականներու կեսէն, իբրեւ հիւր բանախօս: Այնուհետեւ, 1973էն սկսեալ, շուրջ 35 տարի դաստանդեց Հայկազեանի մէջ: Իսկ 1989ին, երբ Համալսարանի Խնամակալ մարմինը որոշեց վերսկսիլ Հայկազեան Հայագիտական Հանդէսի հրատարակութիւնը, իրեն վստահուեցաւ այդ վերականգնողական դժուարին ու երախտաշատ առաքելութիւնը: Հայր Կոստանէն բացառիկ ձեռնհասութեամբ գլուխ հանեց այդ գործը, եւ այսօր 1990էն ի վեր լոյսին եկած են 23 հատորներ, որոնք տարողունակ թափ ու կշիռ կու տան զիրենք նախորդող տաս հատորներուն, Հանդէսը վերածելով համահայկական հայագիտական փնտռումած տարեգիրքի: Ահա թէ ինչու, 2009ին Հայր Կոստանէն պարգևատրուեցաւ Հայկազեան Համալսարանի Եզակի Մտաւորական Մրցանակով:... Հայկազեան Հայագիտական Հանդէսի իմբագրութիւնը, Համալսարանի տնօրէնութեան հետ համախորհուրդ, փափաքեցաւ յատուկ կերպով ընդգծել Հայր Կոստանէնի արդիւնաւետ եւ օրինաբեր ներկայութիւնն ու գործունէութիւնը այս կրթօճախին մէջ: Հայաստանի Ազգային Գրադարանի Տնօրէն Տիար Տիգրան Զարգարեան անձամբ ականատես եղաւ Անդրանիկ Օայրազոյն Վարդապետ Կոստանէն բացառիկ երեւոյթին եւ միացած Համալսարանի ընտանիքին ահա աւելի առանձնապատուկ կը դարձնէ այս շնորհանդէսը, Հայր Կոստանէնը պատուելով Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանի Յակոբ Մեղապարտ Շքանշանով»:

Փակագիծի մէջ տեղին է նշել, թէ աւելի ետք, 23 Մայիս 2014ին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Մովսէս

Խորենացիի մետալով պատուեց Հայր Անդրանիկ Ս. Վրդ. Կոստեանը, իր «Հայրենիք-Սփիւռք կապերի զարգացմանը բերած նպաստի, ինչպէս նաեւ հայապահպանութեան գործում ներդրած աւանդի համար»:

Ապա Դոկտ. Էքմէքճի բեմ հրաւիրեց Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Տիար Աշոտ Քոչարեանը, որ ընթերցեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանի Տնօրէնութեան գիրը եւ յանձնեց յուշամետալը:

Բեմ բարձրանալով, դեսպան Քոչարեան իրեն պատիւ համարեց նման անձնաւորութեան մը այսպիսի յուշամետալի յանձնումը եւ կարդալէ ետք Ազգային Գրադարանի Տնօրէնութեան գիրը, Անդրանիկ Ս. Վրդ. Կոստեանին յանձնեց յուշամետալը:

Իր խօսքին մէջ, Հայր Կոստեան շնորհակալութիւն յայտնեց այս մեծարման համար եւ խոկաց *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* աւելի քան քառասնամեայ երթով եւ 33 հատորներով յատկանշուող գոյատեւման շուրջ: Ան «գոհունակութիւն եւ հրճուանք» յայտնեց 33րդ հատորի լոյս ընծայման առթիւ, եւ հիմնաւորեց թէ ինչու «հազուադէպ» իրողութիւն է նման յաջողութիւնը Սփիւռքի մէջ: Ապա ան այսպիսի իրագործումին իբրեւ պատճառ թուարկեց Հայկազեան Համալսարանի «*իրերայաջորդ տնօրէնութիւններուն եւ խնամակալութեանց առաջին օրէն ցոյց տուած ոչ միայն նիւթական քաջալերանքը, այլ մանաւանդ վստահութիւնը*»: Ան նշեց նաեւ խմբագրակազմի «*մանաւանդ խմբական աշխատանքի հանդէպ ցուցաբերած փարումը*», «*բոլորիս համոզուածութիւնն է, թէ ՀՀ Հանդէսը Սփիւռքի մէջ ազգօգուտ գործ կը կատարէ, - եւ - հաւատքը, - թէ - շնորհակալ ու հաճելի գործ մը կը կատարէ խմբագրութիւնը Եկեղեցիին եւ Աստուծոյ*»:

Փակման իր խօսքին մէջ, Հայկազեան Համալսարանի Նախագահ, Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսքեան մատնանշեց որ «*հայկականն ու գիտականը կը միտին միանալ մեր հայագիտական բոլոր օջախներուն մէջ*»: Ապա ընդգծեց, թէ՝ *Սփիւռքի երկիրներու այլազան մշակոյթներու ենթակայ, եւ անոնց ընձեռած բոլոր հմտութիւններէն ու մեթոտներէն օգտուող հայ մտաւորականներուն համար հասարակաց եզրեր գտնելն ու միշտ հայրենի գիտնականներու մտքերուն հետ սահուն հաղորդակցութիւն գտնելը ինքնին ծանր, միաժամանակ ստեղծագործ մտաւորական աշխատանք կը դառնայ*»:

«*Հայագիտութեան գիտականութիւնը, հայագիտութեան ազգայնական առաքելութիւնն ունենալու կամ չունենալու հարցը, հայագիտութեան էութեան եւ ժողովրդականութեան ուղղակի բախումը, այս բոլորը կան ու պիտի մնան հայագիտական ոլորտի մարտահրաւերներէն ոմանք, եւ մեր Հանդէսի հմուտ խմբագիրները հեռու չեն այդ ասպարէզներէն, իսկ այս հատորի խմբագրականը արդէն*

կ'արծարծէ նոյնը»: Վեր. Հայտօսթեան անդրադարձաւ յառաջիկայ Հոկտեմբերի կէսերուն Երեւանի մէջ տեղի ունենալիք «Հայագիտութիւնը Եւ Արդի Ժամանակաշրջանի Մարտահրաւերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովին, որուն պիտի մասնակցի նաեւ Հայկազեան Համալսարանը: Անոր «արդիւնաբեր աշխատանք» մաղթելէ ետք, Վեր. Հայտօսթեան ուրախութեամբ նշեց որ այս կրթաշրջանին Հայկազեան Համալսարանի հայագիտական բաժին արձանագրուած են չորս ուսանողներ: Ան ողջունեց եւ քաջալերեց այս երեւոյթը:

Վեր. Հայտօսթեան «գնահատելի» գտաւ Հանդէսի խմբագրական կազմին գործունէութիւնը՝ «իմաստուն եւ ներշնչող գլխավորութեամբ Մ. Վ. Հայր Անդրանիկ Կոստեանի» եւ բոլորիս մաղթեց երկար համագործակցութիւն եւ աշխատասիրութիւն: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանի Տնօրէն Տիար Տիգրան Զարգարեանին՝ Հայր Կոստեանը Յակոբ Մեղապարտի անուան յուշամետալով պարգևատրելուն առթիւ, շնորհաւորեց Հանդէսի 33րդ հատորի հեղինակները, խմբագրակազմը, ընթերցողները, մատնանշելով մօտալուտ, դարձեալ գիրքի շնորհանդէսի հանդիպման մը:

Հանդիսութեան աւարտին, Վեր. Հայտօսթեան, Դեսպան Քոչարեան, Վեր. Գարակէօզեան եւ Հանդէսի խմբագրակազմը հատեցին աւանդական կարկանդակը: Ներկաները հիւրասիրուեցան եւ առիթ ունեցան թերթատելու Հանդէսի բոլոր 33 հատորներն ու Haigazian University Pressի հրատարակութիւնները:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԳ. Հատորը կը հաշուէ 562 էջ, որոնք ստորագրուած են 24 մասնագէտներու կողմէ՝ Հայաստանէն, Արցախէն, Լիբանանէն, եւ Մ. Նահանգներէն:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԱ., ԼԲ., ԼԳ. եւ ԼԴ. հատորներու թուայնացած տարբերակը կարելի է գտնել Հայկազեան Համալսարանի կայքին վրայ՝

<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx>